ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅԼ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-1

ք. Երևան «11» 02 2020թ.

ՀՀ Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Աստղիկ Գրատուն>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ա. Չունգուրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման աշխատանքների կատարման պարտավորություն (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը,

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ընդունել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն դաշտակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4693880 (չորս միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար ութ հարյուր ութսուն) 22 դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և 22 օրենքով սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է 22 դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:
5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:
7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ վիճակագրական կոմիտե | «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ |
| ք. Երևան, Կառավարական տուն 3 | ք.Երևան, Ծ. Իսակովի 48/2 |
| ՀՎՀՀ 02507509 | ՀՎՀՀ 01505177 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 90001101102[illegible] | Հ/Հ 1930065750990100 |
| Գլխավոր քարտուղար | Ընկերության տնօրեն |
| Ա. Հայրապետյան ---------------- | Ս.Չունգուրյան ---------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«11» փետրվարի 2020թ. կնքված N ՀՀ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-1*
*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավոր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | I եռ. /մինչև մարտի 31-ը/ | | II եռ. | | III եռ. | | IV եռ. /մինչև նոյեմբերի 30-ը/ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | քանակը | գինը /ՀՀ դրամ/ | քանակը | գինը /ՀՀ դրամ/ | քանակը | գինը /ՀՀ դրամ/ | քանակը | գինը /ՀՀ դրամ/ |
| 7 | 79821200-754 | **Այլ պոլիգրաֆիկական արտադրանքի տպագրման ծառայություն /Համայնքի գիրք Ձև թիվ 1/** | Պատրաստի գրքի չափսը՝ 27.5x25 սմ, էջերի տպագրությունը՝ 1 գույնով՝ 200 էջ, էջերի թղթի տեսակները՝ օֆսեթային՝ 60 գ/մ2, կազմի տպագրությունը և կազմի թղթի տեսակները՝ 1 գույնով, կոշտ կազմ, ստվարաթուղթ՝ 1200 գ/մ2, կազմարարությունը՝ սոսնձված, թելակար, լիդերինապատված | հատ | 780 | 2730.0 | 3500 | | | | | 3500 | 2730.0 | | |
| 8 | 79821200-755 | **Այլ պոլիգրաֆիկական արտադրանքի տպագրման ծառայություն /Համայնքի գիրք Ձև թիվ 1/** | Պատրաստի գրքի չափսը՝ 27.5x25 սմ, էջերի տպագրությունը՝ 1 գույնով՝ 100 էջ, էջերի թղթի տեսակները՝ օֆսեթային՝ 60 գ/մ2, կազմի տպագրությունը և կազմի թղթի տեսակները՝ 1 գույնով, կոշտ կազմ, ստվարաթուղթ՝ 1200 գ/մ2, կազմարարությունը՝ սոսնձված, թելակար, լիդերինապատված | հատ | 576 | 345.6 | 600 | | | | | 600 | 345.6 | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 79821200-756 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Այբբենական գիրք Ձև թիվ 3/ | Չափսերը՝ 60X84/8, էջերի տպագրությունը՝ 1 գույնով՝ 160 էջ, էջերի թղթի տեսակները՝ օֆսեթային՝ 60 գ/մ2, կազմի տպագրությունը և կազմի թղթի տեսակները՝ 1 գույնով, կոշտ կազմ, ստվարաթուղթ՝ 1200 գ/մ2, կազմարարությունը՝ տանձված, թելակար, լիդեռինապատված | հատ | 678 | 644.1 | 950 | | | | | 950 | 644.1 | | |
| 14 | 79821200-761 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) / | A4 չափի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով: | հատ | 3.96 | 79.2 | 20000 | 5000 | 19.8 | 5000 | 19.8 | 5000 | 19.8 | 5000 | 19.8 |
| 18 | 79821200-765 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-Ա (տարեկան) վիճակագրական և հաշվետվության լրացման հրահանգ/ | A3 չափի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 3 թերթից մետաղակար, փաթեթավորված 100 հատերով: | հատ | 31.8 | 79.5 | 2500 | | | | | | | 2500 | 79.5 |
| 22 | 79821200-769 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև (9-Ս)/ | A3 չափի միակողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով: | հատ | 8.5 | 17.0 | 2000 | | | | | | | 2000 | 17.0 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 79821200-770 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հաշվառման Ձև թիվ 2 ցուցակ/ | A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 5 թերթից մետաղակար, փաթեթավորված 100 հատերով: | հատ | 55. 6 | 241.86 | 4350 | | | | | 4350 | 241.8 6 | | |
| 24 | 79821200-771 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցուցումներ/ | A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 5 թերթից, մեջտեղից տետրակակար: | հատ | 27.6 | 37.26 | 1350 | | | | | 1350 | 37.26 | | |
| 25 | 79821200-772 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Լերգիր/ | Պատրաստի ձևաթղթի չափսը 25x25 սմ, երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով: | հատ | 4.8 | 48.0 | 10000 | | | | | 1000 0 | 48.0 | | |
| 26 | 79821200-773 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /1-ԳԻՆ ԳՑՈՒՂ/ | A4 չափսի տպագրություն, կազմված 5 թերթից, մետաղակար, որից 4 թերթը երկկողմանի, իսկ 1 թերթը միակողմանի միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, | հատ | 27.6 | 66.24 | 2400 | 600 | 16.5 6 | 600 | 16.56 | 600 | 16.56 | 600 | 16.56 |
| 38 | 79821200-787 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԱՎՏՈ (ամսական)/ | A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով: | հատ | 4.8 | 42.24 | 8800 | 2200 | 10.5 6 | 2200 | 10.56 | 2200 | 10.56 | 2200 | 10.56 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 46 | 79821200-796 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Չն 1- ծառայություններ (ամսական)/ | A3 չափի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով: | հատ | 4.8 | 362.88 | 75600 | 18900 | 90.72 | 18900 | 90.72 | 17800 | 85.44 | 20000 | 96.0 |
| Ընդամենը | | | | | | 4693.88 | | | 137.64 | | 137.64 | | 4179.18 | | 239.42 |

Կատարողը տպագրված նյութերը մատակարարում է ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական 3 տուն հասցեով:

*Տպագրման ծառայությունների մատուցման պարտադիր պայման է Պատվիրատուի կողմից կատարողին տպագրման վերջնաժամկետից առնվազն 30 օրացուցային օր առաջ հաշվետվական ձևերի նմուշների էլեկտրոնային տարբերակի տրամադրումը: Նշված ժամկետում Պատվիրատուի կողմից էլեկտրոնային տարբերակի չտրամադրման դեպքում չտրամադրված նմուշի տպագրման անհրաժեշտությունը բացակայում է:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ վիճակագրական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ, Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար

Ա. Հայրապետյան ____________ (ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք.Երևան, Ծ. Իսակովի 48/2
ՀՎՀՀ 01505177
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930065750990100
Ընկերության տնօրեն

Ս.Չոնգուրյան ____________ (ստորագրություն)

Կ.Տ

«11» փետրվարի 2020թ. կնքված N 22 ՎԿ-ՊՁՄՃԶԲ-2020/1-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. 22 դրամ

Աշխատանքի

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 7 | 79821200-754 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Համայնքի գիրք Ձև թիվ 1/ | | | | | | | 2730.0 | 2730.0 | 2730.0 | 2730.0 | 2730.0 | 2730.0 | 2730.0 |
| 8 | 79821200-755 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Համայնքի գիրք Ձև թիվ 1/ | | | | | | | 345.6 | 345.6 | 345.6 | 345.6 | 345.6 | 345.6 | 345.6 |
| 9 | 79821200-756 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Արքենական գիրք Ձև թիվ 3/ | | | | | | | 644.1 | 644.1 | 644.1 | 644.1 | 644.1 | 644.1 | 644.1 |
| 14 | 79821200-761 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային)/ | | 19.8 | 19.8 | 39.6 | 39.6 | 39.6 | 59.4 | 59.4 | 59.4 | 79.2 | 79.2 | 79.2 | 79.2 |
| 18 | 79821200-765 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-Ա (տարեկան) վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգ/ | | | | | | | | | | 79.5 | 79.5 | 79.5 | 79.5 |
| 22 | 79821200-769 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև (9-Ս)/ | | | | | | | | | | 17.0 | 17.0 | 17.0 | 17.0 |
| 23 | 79821200-770 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հաշվառման Ձև թիվ 2 ցուցակ/ | | | | | | | 241.86 | 241.86 | 241.86 | 241.86 | 241.86 | 241.86 | 241.86 |
| 24 | 79821200-771 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցուցամեկ/ | | | | | | | 37.26 | 37.26 | 37.26 | 37.26 | 37.26 | 37.26 | 37.26 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25 | 79821200-772 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ներդիր/ | | | | | | | 48.0 | 48.0 | 48.0 | 48.0 | 48.0 | 48.0 | 48.0 |
| 26 | 79821200-773 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /I-ԳԻՆ, ԳՑՈՒՂ / | | 16.56 | 16.56 | 33.12 | 33.12 | 33.12 | 49.68 | 49.68 | 49.68 | 66.24 | 66.24 | 66.24 | 66.24 |
| 38 | 79821200-787 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԱԿՏՈ (ամսական)/ | | 10.56 | 10.56 | 21.12 | 21.12 | 21.12 | 31.68 | 31.68 | 31.68 | 42.24 | 42.24 | 42.24 | 42.24 |
| 46 | 79821200-796 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ծառայություններ (ամսական)/ | | 90.72 | 90.72 | 181.44 | 181.44 | 181.44 | 266.88 | 266.88 | 266.88 | 362.88 | 362.88 | 362.88 | 362.88 |
| Ընդամենը | | | | 137.64 | 137.64 | 275.28 | 275.28 | 275.28 | 4454.46 | 4454.46 | 4454.46 | 4693.88 | 4693.88 | 4693.88 | 4693.88 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ վիճակագրական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար

Ա. Հայրապետյան ----------
(ստորագրություն)

Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ
ք.Երևան, Ծ. Իսակովի 48/2
ՀՎՀՀ 01505177
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193006575090100
Ընկերության տնօրեն

Ս.Զոհրաբյան ----------
Կնքությունը

Կ.Տ

Հավելված 3
«11» փետրվարի 2020թ. կնքված N 22 ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-1
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«11» փետրվարի 2020թ. կնքված N 22 ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-1*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________-ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն